ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՅԻՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՆՈՐԻԿԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժ. 01.02 - ‹‹Նորագույն շրջանի հայ գրականություն›› մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Արցախի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր
Սուրեն Սերյոժայի Աբրահամյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Սարգսի Հակոբյան
բանասիրական գիտությունների
թեկնածու
Արքմենիկ Հրայրի Նիկողոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2021 թ. հոկտեմբերի 22-ին, ժամը 12:30-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ.սեպտեմբերի 9-ին :

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ բանասիրական
գիտությունների թեկնածու Ս.Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է 1960-ականներին հրապարակ եկած բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունների ուսումնասիրմանը: Ներածության մեջ անդրադարձել ենք Հովհ. Գրիգորյանի ու նրա սերնդակիցների բերած նորույթին: Աշխատանքի առաջին՝ ‹‹1960-ականների գրական նոր սերնդի ուղին›› գլխում անդրադարձ է կատարվել գրական նոր սերնդի մուտքին և ուղուն, գրաքննադատության արձագանքին: Մեջբերվել են գրականագետների ու գրաքննադատների առավել ընդհանրական վերլուծություններ պարունակող մեկնաբանությունները: Փորձ է արվել ամբողջական նկարագիր տալ գրական նոր սերնդի ներկայացուցիչների պոեզիա բերված նորույթին՝ մասնավորապես վերլիբրի, նորի ու ավանդականի համադրման գրական ստեղծագործական մեխանիզմներին: Ատենախոսության երկրորդ՝ ‹‹Հեգնանքը Հովհ. Գրիգորյանի պոեզիայում›› գլխում արտացոլվել են Հովհ.Գրիգորյանի մինչանկախության և հետանկախության շրջանների ստեղծագործությունների առանձնահատկությունները: Այստեղ ուշադրություն է հատկացվել հեգնանքի տարրին, որը Հովհ.Գրիգորյանի պոեզիայում ուրույն ձևով է հարթել իր ճանապարհը՝ նպատակային, բովանդակային ու թեմատիկ ուղղվածությամբ: Հովհ.Գրիգորյանի պոեզիայում հեգնանքը կարելի է համարել լուրջ արժեք, որում համադրված են ասելիքի գաղափարական ու գեղագիտական ներքին կապերն ու ընդհանուր միտումները:

Հովհ.Գրիգորյանի ինչպես մինչանկախության, այնպես էլ հետանկախության շրջանի ստեղծագործությունների թեմատիկ ընդգրկումները լայն են: Սեր, հայրենիերգություն, կենսական, արժեհամակարգային նշանակության հարցադրումներ, գրական արժեքների վերագնահատում ու վերահաստատում, բանաստեղծի կամ պոեզիայի անելիք և ասելիք. ահա Հովհ. Գրիգորյանի պոեզիայի մինչանկախության և հետանկախության շրջանների ընդգրկուն տարածքը:

Ատենախոսության երրորդ՝ ‹‹Հովհ.Գրիգորյանի պոեզիայի բանարվեստը›› գլխում ներկայացվել է Հովհ.Գրիգորյանի ստեղծագործությունների բանարվեստի ածանձնահատկությունները: Գրական նոր սերունդը՝ ի դեմս Հովհ.Գրիգորյանի, իր լեզվամտածողությամբ ու արտահայտչամիջոցներով հարստացրեց բանարվեստը՝ հետևելով բանաստեղծական նոր համակարգի պահանջներին:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Հովի.Գրիգորյանի ստեղծագործական ճանապարհն է՝ գեղագիտական ու գաղափարական ուղղվածությամբ: Հետազոտության նպատակն է .

1. Գրականագիտական վերլուծությունների ու քննադատությունների լույսի ներքո ներկայացնել գրական նոր սերնդի ուղին՝ այդ համատեքստում դիտարկելով Հովի.Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկություններն ու գաղափարական միտումը:

2. Բացահայտել գրողի աշխարհընկալման ու աշխարհայեցողության առանցքային դրույթներն ու սկզբունքները ինչպես մինչանկախության, այնպես էլ հետանկախության շրջանի ստեղծագործություններում:

3. Իրականացնել գրողի ստեղծագործություններին բնորոշ կողմերից մեկի՝ հեգնանքի բազմակողմ վերլուծություն՝ առաջադրված խնդիրների նպատակային մեկնաբանմամբ:

4. Վերլուծել Հովի.Գրիգորյանի ստեղծագործությունների բանարվեստը, խոսքարվեստի գեղարվեստական հնարքների յուրահատկությունը:

5. Բացահայտել Հովի. Գրիգորյանի ապրումների ու նրա ստեղծագործությունների միջև առկա ներքին ֆենոմենոլոգիական կապը:

Ըստ այդմ փորձել ենք լուծել հետևյալ խնդիրները .

1. Հովի. Գրիգորյանի պոեզիայի կառուցվածքային, գեղագիտական առանձնահատկությունները դիտարկել 1960-ականների գրական նոր սերնդի ժառանգության համապատկերում:

2. Բացահայտել Հովի.Գրիգորյանի մինչանկախության և հետանկախության շրջանների ստեղծագործությունների թեմատիկ և բովանդակային սկզբունքների ներքին օրինաչափությունները, կառուցվածքն ու առանձնահատկությունները:

3. Ներկայացնել Հովի.Գրիգորյանի բանարվեստի կառուցվածքային համապարփակ պատկերը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անկախության տարիներին ազգային թեմատիկան, նրանից ածանցվող քաղաքական հրապարակախոսությունը զարգացում ապրեց նաև Հովի.Գրիգորյանի պոեզիայում: Պոեզիան կարծես ճշգրտում էր վաղվա օրվա սահմանը, նրա գաղափարական համատեքստը, որի առանցքում ազգայինի պահպանման խնդիրն է: Ինչպիսի՞ն է գրիգորյանական պոեզիան, ո՞րն է այն ինքնատիպությունը, որով ավելի ակնառու և շեշտված է դառնում գրողի ասելիքը, գեղագիտական ու գաղափարական հարցադրումը: Թերևս գրական այս խնդիրների համատեքստում ենք դիտարկել ատենախոսության թեմայի

արդիականությունը, որով պայմանավորված է Հովի.Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկություններն ուսումնասիրելու և վերլուծելու անհրաժեշտությունը: Ատենախոսությունն ունի տեսական ու գործնական նշանակություն, քանի որ թեմատիկ և ժամանակագրական բաժանումներով գրեթե ամբողջական պատկերացում է տրվել Հովի. Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունների մասին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության տեսական հիմքը կազմում են թե՛ հայ գրականագիտական, և թե՛ համաշխարհային ուսումնասիրությունները:

Ուսումնասիրման ընթացքում կիրառվել են վերլուծական ու համեմատական, ինչպես նաև՝ կառուցվածքաբանական, հոգեբանական, գեղագիտական ու փիլիսոփայական մեթոդները:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հովի.Գրիգորյանի ստեղծագործությունների մասին ուսումնասիրությունները փաստում են, որ այդ կապակցությամբ գրական վերլուծական ու գրաքննադատական անդրադարձերը գնահատելի են, թեև ոչ սակավ: Արժեքավոր վերլուծություններ են Ալեքսանդր Թոփչյանի[1], Գրիգոր Պլտեանի[2], Գրիգոր Հակոբյանի[3], Ժենյա Քալանթարյանի[4], Սուրեն Աբրահամյանի[5], Արքմենիկ Նիկողոսյանի[6], Զավեն Ավետիսյանի[7] հոդվածները և ուսումնասիրությունները: Սակայն ամբողջական ու համակողմանիորեն վերլուծության չի ենթարկվել Հովի.Գրիգորյանի պոեզիան:

---

[1] Տե՛ս **Թոփչյան Ա.**, Բառի սահմանները, Երևան, ‹‹Սովետական գրող››, հրատ., 1978:

[2] Տե՛ս **Պլտեան Գ.,** Գրգորեան ժամանակի դիմաց, Կայք գրականութեան տարեգիրք, ֆրանսահայ գրողներու ընկերակցութեան, Փարիզ, 1989:

[3] Տե՛ս **Հակոբյան Գ.**, Հպանցիկ նկատառումներ Հովիաննես Գրիգորյանի ‹‹Կես ժամանակ›› ժողովածուի մասին, ‹‹Գրական թերթ››, թիվ 3, 14 դեկտեմբերի, 2006:

[4] Տե՛ս **Քալանթարյան Ժ.,** Ուրվագծեր արդի հայ գրականության, Եր., 2006:

[5] Տե՛ս **Աբրահամյան Ս.**, Հովիաննես Գրիգորյան. Ընդամենը մի տող և ընդամենը… մի կյանք, Գրականագիտական հանդես, ԺԶ, Երևան, 2015:

[6] Տե՛ս **Նիկողոսյան Ա.**, Հովհաննես Գրիգորյանի պոեզիան (Նոթագրումներ մենագրության համար), ‹‹Գրական թերթ››, 10 օգոստոսի, 2015:

[7] Տե՛ս **Ավետիսյան Զ.**, 20-րդ դարավերջի հայ պոեզիան արդի համաշխարհային գրականության համատեքստում, Գրականագիտական հանդես, 2016:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ փորձ է արվել արդի գրականագիտական լույսի ներքո ներկայացնել Հովի.Գրիգորյանի պոեզիայի առանձնահատկությունները՝ նրա աշխարհայացքային ու գաղափարական համակարգի համապարփակ վերլուծություններով ու գիտական եզրակացություններով: Հատուկ ուշադրություն է հատկացվել Հովի. Գրիգորյանի պոեզիայում հեգնանքին, որով հստակեցվել է նրա ասելիքի «սահմանը», արտացոլվել կյանքի ու գրականության բազմաշավիղ ներթափանցումները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Արցախի պետական համալսարանի Հայ գրականության և լրագրության ամբիոնում: Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են գիտական ժողովածուներում հրապարակված հոդվածներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, երկրորդգլուխը ունի երկու ենթագլուխ : Ատենախոսությունը ավարտվում է եզրակացություններով, օգտագործված գրականության ցանկով, ծավալը՝ 156 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ տրված է ատենախոսության ընդհանուր բնութագիրը, մշակվածությունը: Հիմնավորված է թեմայի արդիականությունը, գործնական և տեսական նշանակությունը, շարադրված է աշխատանքի մեթոդաբանությունը, աշխատանքի կառուցվածքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1960 - ԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՈՒՂԻՆ

Յուրաքանչյուր գրական սերունդ ունի իր ուղին: Գրական նոր սերնդիճանապարհը, իրավամբ, հավաստեց այդ սերնդափոխությունը, չնայած ստեղծագործողների դասական պատկերացումներից հեռանալու միտման բուռն

քննադատություններին: Իրականում ամեն մի նոր գրականության երակը նախ և առաջ ազգայինն է, բայց և այն մշտապես պետք է սնուցվի համաշխարհային գեղարվեստական փորձով: Հակառակ պարագայում յուրաքանչյուր ժողովուրդ կունենա կղզիացած ու ներազգային գրականություն, որն անհեթեթություն կթվա գլոբալացվող մարդկությանը:

Բանավիճային բուռն քննարկումները թվում է՝ լուծում են արդի պոեզիայի զարգացման տարածքի խնդիրը՝ չնայած բանավեճի կիզակետը, հիմնականում, ասելիքի ձևի մեջ է: «Իմ խորին համոզմամբ,- գրում է Հովի.Գրիգորյանը,- ժամանակների մեջ անկաշկանդ տեղաշարժվող գրողի փորձն արժեքավոր է միայն այն դեպքում, եթե գրողն ինքը, նրա խոսքը արժեքավոր է ներկա ժամանակի տեսանկյունից, և ինչքան մեծ է այդ փոխկապակցվածությունը, այնքան մեծ է իր կյանքը ժամանակից, իրական ժամանակից գրողի անջատվելու ձգտումը»[8]:

Հենց սա էլ պահանջում է լեզվաարտահայտչական իր ձևը՝ ազատ բանաստեղծությունը (վերլիբր), որը դարձավ գրական նոր սերնդի ստեղծագործության ձևն ու քննադատության հիմնական թիրախը: Ազատ բանաստեղծությունն ամբողջացնող միավոր է դառնում հեգնանքը, որը Հովի.Գրիգորյանի համար դարձել է յուրահատուկ հոգեբանական պաշտպանություն, ինչու չէ նաև մտքի ստրատեգիա:

Նոր սերնդի պոեզիայի բնորոշ կողմը ինտելեկտուալ կառույցի առկայությունն է, որով ի ցույց է արվում ասելիքի արժեքայնության նշաձողն ու յուրօրինակ ընթացքը: Այդ ընթացքը համահունչ է ժամանակի զարկերակին, որի միջով բեկվում է բանաստեղծի ինտելեկտը, զգացմունքն ու ապրումը, դրանից արտածվող խոհն ու խոսքը: Հիրավի, նոր սերունդը հավատարիմ մնալով իր արվեստի արյան անկեղծությանն ու դավանանքին, ասում է իր նոր խոսքը, որն, ի դեպ, ազատ ու անկաշկանդ է ստեղծագործական մտածողության ու վերարտադրման ձևերում: Պատահական չէ, որ վերլիբր կառուցման ձևը դարձել է նոր սերնդի պոեզիայի կառուցակարգ: Ասելիքի և ստեղծագործական մտածողության այս ձևը ևս ժամանակի ընթացքում կվերածվի ավանդույթի, որի մեջ ընթերցողը կտեսնի պոեզիայի նոր օրինաչափական սկզբունքներ: Անշուշտ, ժամանակը ծնում է ասելիքի իր ձևը: Իսկ ժամանակը դեռևս իր խոսքը կասի գրական նոր սերնդի հետագծի մասին:

Գրական նոր սերնդի ուղին յուրահատուկ է իր բացահայտումներով, որը վեր հանեց արդի գրական համապատկերի, մասնավորապես պոեզիայի մի շարք օրինաչափություններ և միտումներ, որոնք այսօր, կարելի է ասել, ամբողջացել են իբրև արդի գրականության պատմության յուրատեսակ մի շրջան:

---

[8] «Գարուն», 1998, N 3, 10 դեկտեմբերի, էջ 3:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԵԳՆԱՆՔԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Երկրորդ գլուխը շարադրել ենք երկու ենթագլուխներով՝ ‹‹Հովի.Գրիգորյանի մինչանկախության շրջանի պոեզիան›› և ‹‹Հովի. Գրիգորյանի հետանկախության շրջանի պոեզիան››:

Անշուշտ, յուրաքանչյուր ժամանակաշրջան պարտադրում է յուրովի մոտեցում իրականությանը: Դա այդպես է նաև գրական պրոցեսում: Եթե փորձելու լինենք ժամանակագրական սահմանաբաժանման ենթարկել Հով.Գրիգորյանի պոեզիան, ապա այն կարելի է բաժանել մինչանկախության և հետանկախության շրջանների:

Հովի. Գրիգորյանի մինչանկախության շրջանի ստեղծագործություններն ամփոփվել են «Երգեր առանց երաժշտության» (1975), «Բոլորովին ուրիշ աշուն» (1979), «Անձրև մի տխուր առիթով» (1982), «Դանդաղ ժամեր» (1986) ժողովածուներում: Հովի. Գրիգորյանի ինչպես մինչանկախության, այնպես էլ հետանկախության շրջանի ստեղծագործությունների թեմատիկ ընդգրկումները լայն են: Ասելիքի լայն համայնապատկերի առանցքում մարդն է՝ իր ապրումներով, մտքերի ու ասելիքի խորությամբ, ներհայեցողության ու ինքնավերլուծության միտումներով: Ժամանակի հավերժության ընկալումը յուրատիպ հայտնությունների է մղում բանաստեղծին, և ահա այստեղ է ծնվում ինչպես ասելիքի ձևը, այնպես էլ՝ թեման: Գուցե թե սա նաև կարելի է պատճառավորել ոճի ազատության, վերլիբրի կառուցակարգի սկզբունքով:

Պոեզիայի և արձակի սեռաժանրային երևույթների փոխներթափանցումները Հովի. Գրիգորյանի պոեզիայում ավելի լայն արտահայտվեց, բոլոր թեմաներում էլ ուշագրավ երանգ ստացան:

1975 թվականին տպագրված «Բոլորովին ուրիշ աշուն» բանաստեղծական գրքույկի առանցքում անհատն է՝ զերծ պայմանականություններից ու սենտիմենտալությունից: Բոլոր ստեղծագործությունների հիմքում բանաստեղծի «ես»-ն է, որի միջով բեկվում են իրողություններն ու երևույթները, իրականն ու ցանկալին:

Բանաստեղծն ապրում է իրականության մեջ, գնահատում գոյությունը և սարսափում, որ նրա շինծու դառնալուց անարձագանք կմնա .

Մի թողեք, որ մեռնեմ անարցունք:
Դաշտերի վրա հիմա ձյուն ու խաղաղություն,
Շրջում են որսորդները և որոնում վերջին աղավնուն,-
Չափից դուրս շատ է մշակված ձեր ձայնը, օրիորդ,
Այն չի հուզի քարացած սրտերը որսորդների[9]:

---

[9]Գրիգորյան Հ., Բոլորովին ուրիշ աշուն, «Սովետական գրող» հրատ., Եր., 197, էջ 16:

Հովի.Գրիգորյանի մինչանկախության շրջանի պոեզիային բնորոշ են ինտելեկտուալ և հուզական ապրումները, պոեզիայի էպիկականացումը՝ վերլիբրի կիրառմամբ: Ըստ որում, վերջինս որպես բանաստեղծական ձև տարերային և ինքնաբուխ է, ոչ թե նախագծված ու արհեստական: Իրականում գոյություն ունի պոեզիայի և ոչ թե նրա ձևի փոխանցման երևույթ, և յուրաքանչյուր ժամանակ ծնում է իր գրողին՝ տալով նրան իրականությունը գեղագիտորեն արտացոլելու մենաշնորհը: Իսկ թեմատիկ ընդգրկումների տարածքը ևս գծում է ժամանակն ու ժամանակի գրական կերպարը, ով չի օտարվում իրականությունից, բայց նրանից բարձր կանգնելու փորձեր է անում: Այսպես է փաստարկվում պոեզիայի արժեքայնության տրամաբանությունը: «Հերոս» ու «հակահերոս» ներհակ բևեռներից արտածվում է արժեքը, որը ստատիկ է, պարզապես ենթադրում է վերաբերմունքի փոփոխություն: Այսպես ասած, փոխանցվող թեմաներից զատ, յուրաքանչյուր բանաստեղծ բերում է նաև իր թեման, կենսական հարցադրումների իր կոնցեպցիան, պարզապես փոխվում է ասելիքի ձևը՝ իրականության և ժամանակի կիզակետում, բանաստեղծական մտքի ու հոգու եռանդի անդուլ ընթացքի մեջ:

Սիրերգություն, հայրենիերգություն, բնություն, հայրերգություն, ժամանակի խորհուրդ, գրական կամ սոցիալական հարցադրում. այս և մնացած բոլոր թեմաների ենթատեքստում բանաստեղծի գրական կերպարն է, որի միջով բեկվում է իրականությունը: Եվ այդ կերպարը կարող է ծնվել բնության երևույթների անձնավորման կամ շնչավորման, իմաստային զուգորդումների կամ սիմվոլների կիրառման ու պարզապես գեղարվեստական հնարաստեղծման արդյունքում: Բոլոր այդ թեմաների ենթատեքստը աշխարհի և մարդու ներդաշնակեցման իրողությանը հասնելն է, ինչը ընթերցողի մոտ ևս ծնում է աշխարհի հետ ներդաշն լինելու ներքին մղումը, դրդապատճառը:

Հովի. Գրիգորյանի առաջադրած գրական - գեղարվեստական խնդիրները վերափոխվում են ժամանակի խնդիրներին համապատասխան: Ավելին, ժամանակագրությունն ու թեմատիկան հստակեցնում են տեքստ և ընթերցող հաղորդակցման սահմանները, ըստ որում ժամանակի խնդրո առարկան կարող է դառնալ թեմատիկայի արժանիքը: Ժամանակն է դառնում թեմատիկայի գեղարվեստական ակտիվությունը: Ժամանակը նրա պոեզիայի անտեսանելի զրուցակիցն է՝ իրական ու անդին, որն օրգանապես կապված է տեքստին ու ենթատեքստին: Թերևս սա է գրիգորյանական պոեզիայի մինչանկախության շրջանի թեմատիկ ընդգրկման սահմանը, որը հարուստ է ու նպատակային, դիպուկ և ներգործուն, ինչը բանաստեղծական մտածողության յուրահատկության ծնունդ է:

Հետանկախության շրջանի գրիգորյանական պոեզիան ևս ունի իր յուրատիպ կառուցվածքային մոտեցումը:Հովի.Գրիգորյանի հետանկախության շրջանի ստեղծագործությունները ամփոփվել են «Հրեշտակներ մանկության երկնքից» (1992), «Երկու ջրհեղեղի արանքում» (1996), «Կես ժամանակ» (2002), «Գիշերահավասար» (2006), «Երբեք չմեռնես - ահա թե ինչ կասեմ քեզ» (2010)

ժողովածուներում, իսկ հետմահու լույս է տեսել նաև «Նոր տողից» հատընտիրը (2013):

Վերոբերյալ ժողովածուների խորագրերն արդեն իսկ հուշում են ժամանակի միջով բեկվող բանաստեղծի ստեղծագործական գաղափարների մասին, որտեղ հանգամանքը, միտումը, թեման և համոզմունքը, դրդապատճառն ու սկզբունքը մնում են նույնը՝ իրականության և ճշմարտության միջև առկա խզման հնարավոր վերացումը: Մարդու գոյի գրիգորյանական ըմբռնման ու ներկայացման մեջ, անտարակույս, հեգնանքի տարրն ընդգծված է: Հետանկախության շրջանի ստեղծագործություններում այն դարձել է նրա ասելիքի յուրատիպ ոճը: Հեգնանքը, իսկ երբեմն նաև գրոտեսկը դառնում են նրա պոեզիայի, այսպես կոչված ռազմավարությունը: Եվ այս միտումը տիպական է գրեթե բոլոր թեմաներին՝ հայրեներգությունից մինչև սիրերգություն, հայրերգություն ու աշնան թեմա:

Հետանկախության շրջանի ստեղծագործությունները ևս յուրատիպ են խոհի, ըմբռնման, համոզմունքների ու հետաքրքրությունների արտացոլման առումով: Մի ամբողջ աշխարհ կա գրիգորյանական պոեզիայում, որն ընթերցողի առաջ բացում է հայրենիքը սիրելու, ճշմարիտ ապրումին ու խոհին հարազատ լինելու մղումը:

Հովի.Գրիգորյանի հետանկախության շրջանի պոեզիայում ակնառու է նրա՝ քաղաքացու, մտավորականի, բանաստեղծի կենսադիրքը, գաղափարական ուղղորդվածությունն ու դիրքորոշումը, որն, ըստ էության, կրթող է, իսկ երբեմն էլ՝ անմրցելի: Հետանկախության շրջանի ստեղծագործություններում բանաստեղծի ասելիքն ավելի կոնկրետ ու որոշակի է հատկապես հայրենիքի, նրանում առկա խնդիրներին առնչվող հարցերում: Խոսքը հատկապես կերպափոխվող հասարակության համահարթեցվող որոշ արժեքների ու բարքերի, իրականության այս կամ այն երևույթի կամ անշրջելի իրողությունների մասին է:

Հովի.Գրիգորյանն ունի գաղափարների ու արժեքների սեփական աշխարհը, որում ինքն ապրում է՝ հակադրվելով իրականությանը: Այդպես նա կատարելության է հասցնում իր պոետիկ ինքնանկարը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԲԱՆԱՐՎԵՍՏԸ

Այս գլխում անդրադարձել ենք Հովի.Գրիգորյանի պոեզիայի բանարվեստի առանձահատկություններին, գրական նոր սերնդի լեզվամտածողությանը:

Հովի.Գրիգորյանն իր արվեստով գրականություն բերեց գրական նոր սերնդին հատուկ յուրօրինակ լեզվամտածողություն և լեզվաարտահայտչական ձևեր՝ դառնալով անկաշկանդ խոհի, բառ-պատկերի նորովի կերտողը՝ ազատ ձևաչափի /վերլիբրի/ կիրառմամբ: Նա անսովոր կենսազգացողությամբ, խոհահուզական ինքնատիպ ընդգրկումներով ու տարողունակ աշխարհընկալումով պարզապես «Ճիշտ խոսեց» /Հ.Գ./ արտահերթ ջրհեղեղին

սպասող ժամանակի մասին՝ դրախտից վտարվածին համոզելով ջրին հարմարվելու և օրվա հրաշքը ընկալելու մեջ: Նաև բանարվեստի մեջ է արտահայտված Հովհ.Գրիգորյանի բանաստեղծական տեքստի ճշմարտությունը՝ իրականության ու ասելիքի հարաբերակցությամբ: Պատահական չէ, որ նրա բառապաշարի լեզուն աչքի է ընկնում իր անկեղծությամբ, պարզությամբ ու չհորինվածությամբ: Ինչպես նշում է Ս. Աբրահամյանը. «…ձգտում են պարզունակության, որ հրաժարվում է բանարվեստի հանրահայտ կանոններից, այլ, ընդհակառակը, ավելի մոտ ընկալելով աշխարհը, մարդուն, ժամանակը, Հովհ. Գրիգորյանի պոեզիան, ժխտման հունով, ավելի բարդ կառույցի է հանգում, որն արտահայտվում է լեզվի, ժանրային ներթափանցումների, տաղաչափական նոր ձևերի յուրացման առումով»[10]:

Հովհ.Գրիգորյանի բանարվեստի լեզուն շաղկապված է իրականության ու նրա առանձին՝ աշխարհայացքային ընկալումների հետ: Այն առնչվում է նաև ժանրային նկարագրի հետ, որտեղ ևս ժամանակի դրոշմը ակնհայտ է:

Նրա պոեզիայի բանարվեստը իրապես դառնում է ընթերցողի ոգին թափանցելու, ընթերցողին մերձենալու ներքին ուժ: Առաջին հայացքից թվում է հարուստ բանարվեստով է լեզուն դառնում ճկուն, բայց ասելիքի կարևորությունն ու թարմությունը, նա շատ լավ է մատուցել նաև գրական-խոսակցական հարուստ, բայց և հասարակ ու անկեղծ բառապաշարի միջոցով:

20-րդ դարում համաշխարհային պոեզիան հասել է խոշոր նվաճումների՝ որոնելով և գտնելով նոր գաղափարներ, մարդաընկալման նոր ձևեր ու հնարավորություններ, ուր գծագրված է մարդու արդի կեցվածքը՝ հարափոփոխ աշխարհի իսկապես բարդ ու հակասական հարաբերություններում: Դարի պոեզիան ունի իր ներքին ուղղությունները, սոցիալ - փիլիսոփայական պատկերացումները, լեզվապատկերային տարաբնույթ ընկալումները: Իրականությունը, մարդկային զգացումներն ու իդեալները բանաստեղծի միջով սինթեզվում, վերածվում են գեղարվեստական խոսքի, ուստիև բանաստեղծը իր լեզվամտածողությամբ ու արտահայտչամիջոցներով պատասխանատու է մարդակերտման իր արվեստում:

Բանաստեղծական նոր սերունդն ասես կանխամտածված դիմում է արձակունակության, փորձում ստեղծել գրական նոր կերպար, որում կարևորը էությունն էր, ներքին ու արտաքին աշխարհների հետ փոխհարաբերվելը, և վերջապես այն ձևավորվում էր հենց բանաստեղծի անձնական ընկալումներից:

Քննադատների տեսանկյունից նոր սերնդի ‹‹անբանաստեղծական›› ընկալումները հակասում են պոետիկայի մշտակա սկզբունքներին, որն ամենևին էլ չի համապատասխանում նոր սերնդի նոր ասելիքին, որն է՝ պարզապես գրել նոր լեզվամտածողությամբ՝ չգործածելով մաշված բառեր ու իմաստներ:

---

[10] Աբրահամյան Ս., Հովհաննես Գրիգորյան, «Ընդամենը մի տող և ընդամենը… մի կյանք», Գրականագիտական հանդես , ԺԶ, 2015:

Մարդն ու նրան շրջապատող աշխարհ - իրողությունները հենց իրենց նախավիճակներում. ահա նոր պոեզիայի ասելիքն ու անելիքը, որի արդյունքում ձևավորվում է և՛ նոր պոետական պատկեր, և՛ նոր լեզու, և՛ նոր բովանդակություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոր սերնդի պոեզիայի բնորոշ կողմը ինտելեկտուալ կառույցի առկայությունն է, որով ի ցույց է արվում ասելիքի արժեքայնության նշաձողն ու յուրօրինակ ընթացքը: Այդ ընթացքը համահունչ է ժամանակի զարկերակին, որի միջով բեկվում է բանաստեղծի ինտելեկտը, զգացմունքն ու ապրումը, դրանից արտածվող խոհն ու խոսքը: Հիրավի, նոր սերունդը հավատարիմ մնալով իր արվեստի արյան անկեղծությանն ու դավանանքին, ասում է իր նոր խոսքը, որն, ի դեպ, ազատ ու անկաշկանդ է ստեղծագործական մտածողության ու վերարտադրման ձևերում: Պատահական չէ, որ վերլիբրը դարձել է նոր սերնդի պոեզիայի կառուցակարգ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումների .

1. Հովի.Գրիգորյանի պոեզիայի ժամանակագրությունն ու թեմատիկան հստակեցնում են տեքստ և ընթերցող հաղորդակցման սահմանները, ըստ որում ժամանակի խնդրո առարկան կարող է դառնալ թեմատիկայի արժանիքը: Այն դառնում է թեմատիկայի գեղարվեստական ակտիվությունը: Ժամանակը նրա պոեզիայի անտեսանելի զրուցակիցն է՝ իրական ու անդին, որն օրգանապես կապված է տեքստին ու ենթատեքստին: Թերևս սա է գրիգորյանական պոեզիայի մինչանկախության շրջանի թեմատիկ ընդգրկման սահմանը, որը հարուստ է ու նպատակային, դիպուկ և ներգործուն, ինչը բանաստեղծական մտածողության յուրահատկության ծնունդ է: Ժամանակագրական սահմանաբաժանմամբ Հովի.Գրիգորյանի պոեզիան կարելի է բաժանել մինչանկախության և հետանկախության շրջանների:

2. Հովի.Գրիգորյանի մինչանկախության շրջանի պոեզիային բնորոշ են ինտելեկտուալ և հուզական ապրումները, պոեզիայի էպիկականացումը՝ վերլիբրի կիրառմամբ: Ըստ որում, վերջինս որպես բանաստեղծական ձև տարերային և ինքնաբուխ է, ոչ թե նախագծված ու արհեստական: Իրականում գոյություն ունի պոեզիայի և ոչ թե նրա ձևի փոխանցման երևույթ, և յուրաքանչյուր ժամանակ ծնում է իր գրողին՝ տալով նրան իրականությունը գեղագիտորեն արտացոլելու մենաշնորհը: Սիրերգություն, հայրեներգություն, բնություն, հայրերգություն, ժամանակի խորհուրդ, գրական կամ սոցիալական հարցադրում. այս և մնացած բոլոր թեմաների ենթատեքստում բանաստեղծի գրական կերպարն է, որի միջով բեկվում է իրականությունը: Եվ այդ կերպարը կարող է ծնվել բնության երևույթների անձնավորման կամ շնչավորման, իմաստային զուգորդումների կամ

սիմվոլների կիրառման ու պարզապես գեղարվեստական հնարաստեղծման արդյունքում: Բոլոր այդ թեմաների ենթատեքստը աշխարհի և մարդու ներդաշնակեցման իրողությանը հասնելն է, ինչը ընթերցողի մոտ ևս ծնում է աշխարհի հետ ներդաշն լինելու ներքին մղումը, դրդապատճառը:

3. Հետանկախության շրջանի ստեղծագործությունները ևս յուրատիպ են խոհի, ըմբռնման, համոզմունքների ու հետաքրքրությունների արտացոլման առումով: Մի ամբողջ աշխարհ կա գրիգորյանական պոեզիայում, որն ընթերցողի առաջ բացում է հայրենիքը սիրելու, ճշմարիտ ապրումին ու խոհին հարազատ լինելու մղումը:

4. Հովի.Գրիգորյանի ինչպես մինչանկախության, այնպես էլ հետանկախության շրջանի պոեզիայում ակնառու է նրա՝ քաղաքացու, մտավորականի, բանաստեղծի կենսադիրքը, գաղափարական ուղղորդվածությունն ու դիրքորոշումը: Հետանկախության շրջանի ստեղծագործություններում բանաստեղծի ասելիքն ավելի կոնկրետ ու որոշակի է հատկապես հայրենիքի, նրանում առկա խնդիրներին առնչվող հարցերում: Խոսքը հատկապես կերպափոխվող հասարակության համահարթեցվող որոշ արժեքների ու բարքերի, իրականության այս կամ այն երևույթի, անշրջելի իրողությունների մասին է: Հովի.Գրիգորյանն ունի գաղափարների ու արժեքների իր աշխարհը, որում ինքն ապրում է՝ հակադրվելով իրականությանը: Այդպես նա կատարելության է հասցնում իր պոետիկ ինքնանկարը:

5. Հովի.Գրիգորյանի պոեզիայի բնորոշ կողմերից է հեգնանքի՝ որպես ստեղծագործական միավորի կիրառումը: Հեգնանքը հստակեցնում է ստեղծագործության բովանդակային կողմնորոշումներն ու գեղագիտական ըմբռնումները: Այն ստեղծագործական միտքը դարձնում է անսահմանափակ՝ ստեղծագործական մտահղացումների փայլատակումների /ինսայթ/ պահին:

6. Հեգնանքի դրսևորումը նրա մի շարք ստեղծագործություններում առավելապես կապվում է մոդեռնիստական և պոստմոդեռնիստական գեղագիտական չափանիշների հետ, որոնցում գերիշխող է ոչ թե ավանդականը, այլ պոստմոդեռնիստական խաղի տարրը: Հովի.Գրիգորյանի ստեղծագործություններում հեգնանքը, որպես ասելիքն արտահայտելու գեղարվեստական հնարանք միշտ չէ, որ համարվում է ստեղծագործական միավոր, բայց հիմնականում այն արտահայտվում է քաղաքական ենթատեքստ պարունակող ստեղծագործություններում՝ հագեցնելով ասելիքի բովանդակությունը:

Հեգնանքը բանաստեղծի ոճը դարձնում է ինքնատիպ, իսկ նկարագրվող դեպքերի և երևույթների կոնկրետությունը նրա ստեղծագործության գեղարվեստական համակարգը առավել ամբողջական և կառուցիկ: Այն նպաստում է նրա ստեղծագործելու ազատությանը, որով բանաստեղծությունը ոչ միայն դառնում է եղելություն, այլ դրանից բարձր կանգնելու ներքին մղում: Նա ապրում է ժամանակը՝ ներքին խորը տրամադրություններով ու բարդ հուզազգացմունքայնությամբ, և մենք առնչվում ենք միջավայրում ապրող ու միջավայրից բարձր կանգնած անհատականությանը:

7. Հովի.Գրիգորյանի պոեզիան ընդգծում է նրա համամարդկային, ազգային ու անհատական մտածողության սահմանները, ըստ որում հիմնական կշռույթը ազգայինի մեջ է. ո՞վ է հայ մարդը, ի՞նչ առաքելություններ ունի հարցադրմամբ: Այսպես՝ նա բացահայտում է իրականության քաղաքական, հասարակական, մշակութային զարգացումները, որոնք մեկտեղելով՝ ներկայացնում է հետանկախության շրջափուլի յուրատեսակ դիմագիծը:

8. Հովի. Գրիգորյանի բանարվեստի մեջ արտահայտված է բանաստեղծական տեքստի ճշմարտությունը՝ իրականության ու ասելիքի հարաբերակցությամբ: Պատահական չէ, որ նրա լեզուն աչքի է ընկնում իր անկեղծությամբ, պարզությամբ ու չհորինվածությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. ‹‹Նշխարաչափ երկրի մորմոքը Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում››, Մեսրոպ Մաշտոց համալսարանի ‹‹Լրատու››, /գիտական հոդվածների պարբերական ժողովածու/, Երևան, ‹‹Լիմուշ›› հրատ., 2014, էջ 340-345 :

2. ‹‹Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծական աշխարհը››, ԱրՊՀ - ի ‹‹Գիտական տեղեկագիր››, թիվ 1, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 2014, էջ 91-95 :

3. ‹‹Հովհաննես Գրիգորյանի բանարվեստի առանձնահատկությունները››, ԱրՊՀ - ի ‹‹Գիտական տեղեկագիր››, թիվ 1, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 2014, էջ 74-79 :

4. ‹‹1960-ականների գրական նոր սերնդի ուղին››, ‹‹Մխիթար Գոշ››, Գիտական հոդվածներ, 2015, 2 /43/, էջ 219-223:

5. ‹‹Հեգնանքը Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում››, ‹‹Մխիթար Գոշ››, Գիտական հոդվածներ, 2015, 2 /43/, էջ 224-226:

6. ‹‹Հովհաննես Գրիգորյան. Ժամանակի անսխալ տարեգիրը››, Մեսրոպ Մաշտոց համալսարանի ‹‹Լրատու››, / գիտական հոդվածների պարբերական ժողովածու /, Երևան, ‹‹Լիմուշ›› հրատ., 2016, էջ 352-357:

7. ‹‹Հովհաննես Գրիգորյանի մինչանկախության շրջանի պոեզիայի թեմատիկ ընդգրկումները››, Հայագիտական հանդես, 3 /37/, 2017, էջ 80-90 :

8. ‹‹Հովհաննես Գրիգորյանի հայրեներգությունը››, Մեսրոպ Մաշտոց համալսարանի ‹‹Լրատու›› /գիտական հոդվածների պարբերական ժողովածու /,Երևան, ‹‹Լիմուշ›› հրատ., 2020, 2/24/ էջ 113-123:

САИЯН РУЗАННА НОРИКОВНА

ОСОБЕННОСТИ ПОЭЗИИ ОВАНЕСА ГРИГОРЯНА

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.02.“Армянская литература новейшего периода”.

Защита состоится 22-ого октября 2021 года, в 12:30 часов на заседании специализированного совета Литературоведение 003, действующего в Институте литературы имени М.Абегяна НАН РА.

Адрес: г. Ереван, ул. Г. Лусаворич, 15

Предметом исследования диссертации являются произведения О. Григоряна эстетической и идеологической направленности. Цель исследования: в свете литературоведческих анализов и критики представить путь нового литературного поколения, рассматривая в данном контексте особенности и идеологическую тенденцию поэзии Григоряна. Выявить ключевые положения и принципы мировосприятия и мировоззрения писателя как в произведениях периода пред-независимости, так и в период после признания независимости. Кроме того целью исследования является многосторонний анализ иронии, как одной из сторон, присущих произведениям писателя, с целевым толкованием поставленных задач.

Диссертация состоит из введения, трех глав, вторая из которых имеет два подраздела: Она заканчивается выводами и списком использованной литературы.

Общее описание и развитие диссертации даны во введении. Обоснована актуальность темы, ее практическо-теоретическая значимость, изложена методология работы, выделена структура работы.

Первая глава произведения «Путь нового литературного поколения 1960-х годов» рассматривает появление нового литературного поколения, пути, реакции литературной критики. Были процитированы комментарии, содержащие более общий анализ литературных критиков и литературоведов. Сделана попытка дать полное описание новизны, привнесенной в поэзию представителями нового литературного поколения, в частности, литературно-творческих механизмов соединения верлибра, нового и традиционного.

Во второй главе диссертации "Ирония в поэзии Ованеса Григоряна" нашли отражение особенности произведений периодов до признания независимости и после. Здесь особенное внимание было уделено элементу иронии, которым О. Григорян своеобразным образом проложил свой путь с определенной целевой, содержательной и тематической направленностью. Иронию в поэзии Григоряна можно считать серьезной ценностью, в которой сочетаются идеологические и эстетические внутренние связи и общие тенденции. Тематический охват произведений О. Григоряна как в период до независимости, так и в период после обретения независимости широк. В центре панорамы слова-человек со своими переживаниями, глубиной мыслей и слов, тенденциями понимания и самоанализа. Восприятие вечности времени подталкивает поэта к своеобразным откровениям, и вот здесь рождается как форма слова, так и тема. Может быть, это также можно обосновать принципом свободы стиля и структуры верлибра.

Любовь, патриотизм, вопросы жизненного, ценностно-системного значения, переоценка и утверждение литературных ценностей, что поэт или поэзия должны делать и говорить - именно это и есть всеобъемлющая область поэзии Григоряна в периоды до независимости и после признания независимости.

В третьей главе диссертации "Фольклорное искусство поэзии О. Григоряна" представлены особенности фольклора Ованеса Григоряна. Новое литературное поколение в лице О. Григоряна обогатило фольклор новым языковом мышлением и выразительными средствами, следуя требованиям новой поэтической системы.

Исследования о произведениях О. Григоряна свидетельствуют о том, что литературные аналитические и литературно-критические обращения в этой связи ценны, но малочисленны. Ценные анализами являются статьи Александра Топчяна, Григора Плтеана, Григора Акопяна, Жени Калантаряна, Сурена Абрамяна, Аркменика Никогосяна, Завена Аветисяна.

Любовь, патриотизм, природа, отечество, совет времени, литературный или социальный вопрос - эти и все остальные темы представляют собой литературный образ поэта, через который преломляется реальность. И этот образ может родиться в результате олицетворения или вдохновения явлений природы, применения семантических комбинаций или символов и просто художественного созидания. Контекст всех этих тем - достижение реальности гармонизации мира и человека, что порождает у читателя внутреннее стремление, мотивацию гармонизации с миром.

Подводя итог, можно сказать, что литературно-художественные проблемы, выдвинутые О. Григоряном, меняются в соответствии с задачами времени. Более того, хронология и тематика уточняют границы общения текста и читателя, при

этом предметом обсуждения времени может стать ценность тематики. Время становится художественной активностью тематики.

Время - невидимый собеседник его поэзии, реальный и запредельный, который органически связан с текстом и подтекстом. Это феномен включения тематических абзацев поэзии О. Григоряна, богатой, целеустремленной, точной и влиятельной, что является рождением уникальности поэтического мышления.

RUZANNA N. SAYIYAN

FEATURES OF HOVHANNES GRIGORYAN'S POETRY

Dissertation to obtain the degree of Candidate of Philology in Speciality1 10.01.02."Armenian literature of the modern period".
The defense will take place on **october 22,** 2021 at 12:30 at the specialized Council of Literary Criticism 003 at the Institute of Literature of the National Academy of Science after M. Abeghyan.Address: 15 Grigor Lusavorich, Yerevan

SUMMARY

The subject of the research of the dissertation is the works of O. Grigoryan of aesthetic and ideological orientation. The purpose of the study is to present the path of a new literary generation in the light of literary analyses and criticism, considering in this context the features and ideological trend of Grigoryan's poetry as well as to identify the key provisions and principles of the writer's worldview and worldview both in the works of the pre-independence period and in the period after the recognition of independence. In addition, the purpose of the study is a multi-sided analysis of irony, as one of the sides inherent in the works of the writer, with a targeted interpretation of the tasks set.

The dissertation consists of an introduction, three chapters, the second of which has two subsections: It ends with conclusions and a list of references.

A general description and development of the dissertation are given in the introduction. The relevance of the topic, its practical and theoretical significance is substantiated, the methodology of the work is described, the structure of the work is highlighted.

The first chapter of the work "The Path of the New Literary Generation of the 1960s" examines the emergence of a new literary generation, the path, and the reaction of literary criticism. Comments containing a more general analysis of literary critics and literary critics were cited. An attempt is made to give a complete description of the novelty introduced into poetry by representatives of the new literary generation, in particular, the literary and creative mechanisms of combining vers libre, new and traditional.

The second chapter of the dissertation "Irony in the Poetry of Hovhannes Grigoryan" reflects the peculiarities of the works of the periods before and after the recognition of independence. Here, special attention was paid to the element of irony,

with which O. Grigoryan in a peculiar way paved his way with a certain target, content and thematic orientation. Irony in Grigoryan's poetry can be considered a serious value, which combines ideological and aesthetic internal connections and general trends. The thematic coverage of O. Grigoryan's works both in the period before independence and in the period after independence is wide. In the center of the panorama of the word is a person with his own experiences, the depth of thoughts and words, the tendencies of understanding and introspection. The perception of the eternity of time pushes the poet to a kind of revelations, and here both the form of the word and the theme are born. Maybe this can also be justified by the principle of freedom of style and structure of the vers libre.

Love, patriotism, questions of vital, value-system significance, re-evaluation and affirmation of literary values, what a poet or poetry should do and say - this is exactly the comprehensive field of Grigoryan's poetry in the periods before independence and after the recognition of independence.

The third chapter of the dissertation "Folklore Art of O. Grigoryan's Poetry" presents the features of Hovhannes Grigoryan's folklore. The new literary generation represented by O. Grigoryan enriched folklore with new linguistic thinking and expressive means, following the requirements of the new poetic system.

Studies on the works of O. Grigoryan indicate that literary analytical and literary-critical appeals in this regard are valuable, but few in number. The articles of Alexander Topchyan, Grigor Pltean, Grigor Hakobyan, Zhenya Kalantaryan, Suren Abrahamyan, Arkmenik Nikoghosyan, Zaven Avetisyan are valuable analyses.

Love, patriotism, nature, fatherland, the council of time, a literary or social issue - these and all other topics represent the literary image of the poet, through which reality is refracted. And this image can be born as a result of the personification or inspiration of natural phenomena, the use of semantic combinations or symbols and simply artistic creation. The context of all these topics is the achievement of the reality of the harmonization of the world and man, which gives rise to the reader's inner desire, motivation for harmonization with the world.

Summing up, we can say that the literary and artistic problems put forward by O. Grigoryan change in accordance with the tasks of the time. Moreover, chronology and subject matter clarify the boundaries of communication between the text and the reader, while the value of the topic can become the subject of discussion of time. Time becomes an artistic activity of the subject.

Time is an invisible interlocutor of his poetry, real and beyond, which is organically connected with the text and subtext. This is the phenomenon of including

thematic paragraphs of O. Grigoryan's poetry, rich, purposeful, accurate and influential, which is the birth of the uniqueness of poetic thinking.